

ԿԱՆՈՆՆԵՐ
«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
«ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ
ՄԱՐԶԱԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ
ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ

1. Սույն կանոններով սահմանվում են «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) մարզաառողջարարական ծառայություններից (այսուհետ՝ Ծառայություններ) օգտվող այցելուների (այսուհետ՝ Այցելու) վարքագծի կանոնները Հիմնարկի համապատասխան տարածքներում գտնվելու ընթացքում:

2. Հիմնարկի Այցելուի վարքագծի կանոնները (այսուհետ՝ Կանոններ) կարգապահության, վարվելակերպի, վարքագծի և փոխհարաբերությունների առանձնահատկությունները կարգավորող նորմեր են, որոնք նպատակաուղղված են ապահովելու Այցելուի անվտանգությունը, առողջությունը, հարմարավետությունը և Ծառայությունների որակյալ մատուցումը:

3. Այցելուն պարտավոր է պահպանել հետևյալ կանոնները՝

1) Հիմնարկի համապատասխան տարածք մուտք գործել և դուրս գալ (այդ թվում՝ տրանսպորտային միջոցով) Հիմնարկի տրամադրած քարտերով՝ գրանցվելով համապատասխան ընդունարանում,

2) Հիմնարկի տարածք մուտք գործելու պահից կրել մեկանգամյա օգտագործման բախիլներ՝ մինչև համապատասխան մարզակոշիկներից (չմուշկներից և այլն) կամ լողաթափերից օգտվելը,

3) մինչև 14 (տասնչորս) տարեկան Այցելուն Ծառայություններից կարող է օգտվել մարզիչի կամ ծնողի հսկողության ներքո: Մինչև 14 (տասնչորս) տարեկան Այցելուն չի կարող օգտվել կարդիո և ուժային մարզասարքերից, բացառությամբ՝ անհատական մարզիչի ծառայություններից օգտվելիս: Մինչև 7 (յոթ) տարեկան Այցելուն փակ սահադաշտի տարածքում կարող է գտնվել միայն ծնողի ուղեկցությամբ,

4) սահադաշտ մուտք գործել մարզումը սկսելու ժամից 5 րոպե շուտ, համապատասխան հագուստը և չմուշկները հագնելով սահադաշտին կից տեղադրված նստարանների մոտ, ընդ որում՝ Այցելուն կարող է իր հետ բերել չմուշկներ,

5) Ծառայությունների համար սահմանված կարգով կատարել վճարում՝ հաստատված վճարների դրույքաչափերին համապատասխան,

6) մարզումների համար սահմանված (նախատեսված) ժամանակահատվածի ավարտից անմիջապես դուրս գալ Հիմնարկի տարածքից,

7) կատարել մարզիչի, ինչպես նաև Հիմնարկի իրավասու այլ աշխատակիցների կողմից տրված ցուցումները կամ հրահանգները,

8) բարեխղճորեն և խնամքով վերաբերվել Հիմնարկի գույքին,

9) պահպանել հիգիենայի համընդհանուր կանոնները,

10) կրել մարզումների համար նախատեսված համապատասխան մարզահագուստ և մարզակոշիկներ (չմուշկներ և այլն), լողավազանում գտնվել լողաթափերով և օգտվել ռետինե գլխարկից՝ երկար մազեր ունենալու դեպքում,

11) մարզումներն ավարտելուց հետո մարզագույքը վերադարձնել դրա համար նախատեսված տարածք, իսկ թևնոցը կամ Հիմնարկի կողմից մարզվելու համար տրամադրված այլ գույքը՝ Հիմնարկի համապատասխան աշխատակցին,

12) Ծառայություններից օգտվել Հիմնարկի կողմից առաջարկված պայմաններին և ժամանակացույցին (քանակին, օրերին, ժամերին) համապատասխան,

13) մարզումների ընթացքում պահպանել անվտանգության և մարզական գույքից օգտվելու պահանջներն ու կանոնները, ժամանակին մասնակցել խմբակային մարզումներին,

14) մասսայական սահքի Ծառայություններից օգտվելիս հետևել սահադաշտի հերթապահ մարզիչի ցուցումներին, սահել մեծ շրջագծով՝ ժամացույցի սլաքի հակառակ ուղղությամբ (երեխաները և նրանց ծնողները պետք է գտնվեն սահադաշտի կենտրոնական հատվածում): Սահելու ժամանակ արագությունը և ուղղությունը պահպանել այնպես, որ մյուս սահորդների հետ բախում չառաջանա: Ընկնելու դեպքում չպառկել և փորձել հնարավորինս արագ կանգնել,

15) վերահսկել առողջությունը՝ ինֆեկցիոն, մաշկային և շրջապատի համար այլ վտանգավոր հիվանդությունների առաջացման դեպքում, ինչպես նաև խրոնիկ հիվանդությունների սրման ժամանակահատվածում չայցելել Հիմնարկ,

16) Ծառայություններից օգտվելիս առողջության վատթարացման կամ բժշկական հակացուցումներ ունենալու դեպքում այդ մասին տեղեկացնել մարզիչին, բուժաշխատողին կամ Հիմնարկի այլ աշխատակցին,

17) նվազագույնի հասցնել բջջային հեռախոսով խոսելը,

18) Հիմնարկի տարածքից դուրս գալուց առաջ ամբողջությամբ ազատել հանդերձապահարանը իրերից կամ առարկաներից, ինչը չկատարելու դեպքում Հիմնարկը իրավասու է դա անել ինքնուրույն,

19) օգտագործել բացառապես Հիմնարկի սարքավորումները և (կամ) գույքը,

20) պահպանել մաքրություն, չաղտոտել Հիմնարկի տարածքը,

21) առաջին անգամ մարզասարքից և (կամ) մարզումների համար նախատեսված այլ գույքից օգտվելիս խորհրդակցել մարզիչի հետ,

22) գտնվել (մարզվել) այն տարածքում, որտեղ տվյալ Ծառայությունը ենթակա է մատուցման,

23) պահպանել հասարակական կարգն ու բարոյական նորմերը (էթիկայի կանոնները)՝ ցուցաբերելով հարգանք այլ Այցելուների և Հիմնարկի աշխատակիցների նկատմամբ:

4. Հիմնարկի տարածքում, այդ թվում՝ Ծառայությունների մատուցման հատվածներում, արգելվում է՝

1) ծխել (բացառությամբ՝ դրա համար նախատեսված հատուկ տարածքի),

2) գտնվել ոչ սթափ վիճակում, ինչպես նաև թմրանյութերի, հոգեմետ դեղերի (նյութերի) և արգելված դեղամիջոցների ազդեցության տակ,

3) օգտագործել ալոհոլային խմիչքներ, թմրանյութեր, հոգեմետ դեղեր (նյութեր) և արգելված դեղամիջոցներ,

4) սնունդ, սպասք և այլ չնախատեսված առարկաներ կամ իրեր տանել մարզումների համար նախատեսված գոտիներ (սրահներ),

5) գտնվել զենք-զինանթերքով, պայթուցիկ նյութերով, բացառությամբ՝ օրենքով նախատեսված մարմինների աշխատակիցների,

6) սահադաշտի վրա գցել, թողնել իրեր կամ առարկաներ, սահադաշտ մտնել առանց ջմուշկների, ուտել և (կամ) խմել սահադաշտում,

7) սահադաշտում գրկել երեխաներին,

8) սահադաշտում վտանգավոր իրավիճակ (ցատկել, թռիչքներ կատարել, սահել սահմանված ուղղությամբ հակառակ ուղղությամբ, կազմակերպել խմբային մարզումներ,

9) դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ, խոսել ագրեսիվ ձևով և բարձրաձայն, կառարել արարքներ, որոնք կարող են խանգարել կամ վնասել այլ անձանց,

10) առանց Հիմնարկի գրավոր համաձայնության իրականացնել հասարակական կամ հանրային բնույթի միջոցառում (գործունեություն) կամ տարածել կամ տեղաբաշխել գովազդ, լուսանկարահանել կամ տեսանկարահանել,

11) լողավազանի տարածքում վազել, լողողիների վրա կանգնել կամ նստել, ոտաբոբիկ քայլել, լողաթափերով դուրս գալ լողավազանի տարածքից,

12) Ծառայություններից օգտվելու իրավունքը փոխանցել այլ անձի,

13) ինքնուրույն վերացնել մարզասարքերի կամ մարզումների համար նախատեսված այլ գույքի անսարքությունները,

14) այլ այցելուներին մարզումների վերաբերյալ տալ հրառանգներ, խորհուրդներ, կազմակերպել մարզումներ,

15) բերել կենդանիներ:

5. Խմբակային մարզումները իրականացվում են համաձայն Հիմնարկի սահմանած ժամանակացույցի, որը կարող է փոփոխվել առանց սահմանափակումների:

6. Լողավազանում խմբակային մարզումներ անցկացնելիս լողավազանի որոշակի տարածք կարող է ժամանակավորապես սահմանափակվել:

7. Սանիտարահիգիենիկ կանխարգելիչ (պրոֆիլակտիկ) կամ շինմոնտաժային աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված կամ մրցումներ և այլ միջոցառումներ կազմակերպելիս Հիմնարկի կողմից կարող է ժամանակավորապես Ծառայություններ չմատուցվել՝ փոփոխելով մարզումների օրերը և ժամերը, այդ մասին նախօրոք տեղեկացնելով Այցելուին (տեղեկացումն իրականացվում է բանավոր, էլեկտրոնային կամ հաղորդագրության միջոցով):

8. Այցելուի կորած իրերի համար Հիմնարկը պատասխանատվություն չի կրում:

9. Հիմնարկի գույքին վնաս պատճառելու դեպքում Այցելուն կրում է դրա դիմաց համապատասխան փոխհատուցում տալու պարտավորություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. Այն դեպքում, երբ Այցելուն թաքցրել է իր մոտ առկա հրվանդության փաստը, ապա նա կրում է ինչպես իրեն, այնպես էլ այլ անձանց իր հիվանդության պատճառով հասցված վնասի ամբողջական փոխհատուցման պարտավորությունը:

11. Եթե Այցելուն չի կողմնորոշվում՝ ինչպիսի վարքագիծ դրսևորել որոշակի իրավիճակներում, ապա նա պետք է դիմի մարզիչին կամ Հիմնարկի այլ աշխատակիցներին:

12. Այցելուն առաջարկություններ կամ բողոքներ ունենալու դեպքում կարող է բանավոր կամ գրավոր դիմել Հիմնարկին:

13. Այցելուն կարող է իր տրանսպորտային միջոցը կայանել Հիմնարկի ավտոկայանատեղիում մինչև Ծառայությունների մատուցման ժամկետի ավարտը:

14. Սույն կանոնների խախտումը կարող է հանգեցնել Ծառայությունների մատուցման դադարեցման՝ առանց դրանց համար կատարված վճարների վերադարձման կամ փոխհատուցման: